ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. մայիսի 17-20-ը Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Նարեկ Տերյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Արաբական Միացյալ Էմիրություններ, ք. Դուբայ, 2021թ. մայիսի 17-20-ը

4. Հրավիրող կողմը՝

«ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպչական կոմիտե

5. Գործուղման նպատակը՝

2021թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2022թ. մարտի 31-ը ք. Դուբայում անցկացվելիք՝ «Մտքերի միավորում, Ապագայի ստեղծում» խորագրով «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության հետ կապված նախապատրաստական աշխատանքների համակարգում

6. Քննարկված թեմաները՝

- «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով կազմակերպատեխնիկական բնույթի հարցերի քննարկում, այդ թվում.

  - ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով գրավիչ հայկական տաղավարի ստեղծման համար ճարտարապետական նոր դիզայնի մշակման հետ կապված տեխնիկական հարցերի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանի Հանրապետության մասնակցությունը «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսին ի սկզբանե ծրագրված էր կազմակերպել «Էթնոթեք» գաղափարի շուրջ՝ «Դուբայ 2020 Հայաստան, Էթնոթեք» անվանման ներքո, և ընտրվել էր «Նորարար մտքեր» կարգախոսը:

Ներկայումս էմիրաթական կողմից Հայաստանի համար նախագծված տաղավարը կարող է ապահովել միայն ստանդարտ լուծումներ, ինչը հնարավորություն չի տալիս լիարժեք ներկայացնելու Հայաստանը՝ ընտրված թեմային համահունչ էթնիկ առանձնահատկություններով և տեխնոլոգիական հավակնություններով՝ ազգային պատմությունը, լեզուն, կրոնը, մշակույթը, գիտական ներուժը և այլն:

Արաբական Միացյալ Էմիրություններ կայացած այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ»-ի ավագ փոխնախագահ միջազգային կապերի և փոխգործակցության գծով՝ Օմար Շեհադեհի, «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ»-ի IP միջազգային մասնակցի պատասխանատու - երկրի համակարգող՝ Նիկոլաս Մարվաուդի, ինչպես նաև «Beyond Limits» խորհրդատվական ընկերության (Ընկերություն) ղեկավար կազմի հետ: Ընկերությունը զբաղվում է Միջազգային Ցուցահանդեսների Բյուրոյի (BIE) շրջանակներում կազմակերպվող համաշխարհային և մասնագիտացված ցուցահանդեսների նախագծերով և ծառայություններով, այդ թվում նաև «ԷՔՍՊՈ 2020-Դուբայ»-ի շրջանակներում հայկական տաղավարի կառուցապատման և դիզայներական աշխատանքներով:

Վերոնշյալ հանդիպումների ընթացքում էմիրաթական կողմի հետ քննարկվել են հայկական տաղավարի ձևափոխման օպտիմալ տարբերակները, ինչը հնարավորություն կտա համապատասխան տեխնիկական ու տեխնոլոգիական լուծումներով, կառուցվածքային, մեխանիկական, թվային ու ինտերակտիվ էլեմենտների միջոցով՝ համաշխարհային հանրությանը հնարավորինս լիարժեք և պատկերավոր ներկայացնելու հայկական ազգային ինքնության առանձնահատկությունները, հայկական ծագման աշխարհահռչակ գործիչներին և հայ ազգի հետ կապված նշանակալի իրադարձությունները և երևույթները:

Հայաստանի տաղավարը ծրագրված է իրականացնել «Էթնոթեք» թեմատիկ կոնցեպտի հիման վրա, որի հիմնական գաղափարն է՝ երկրի տեխնոլոգիական ապագայի կառուցումը, հիմնված անցյալի լավագույն ավանդույթների վրա:

Այցի շրջանակներում էմիրաթական կողմի հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ տաղավարի նախագծման և ներքին հարդարման ուղղությամբ՝ փորձագիտական մակարդակով համատեղ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ: Այդ գործընթացի ավարտից հետո ցուցահանդեսի շրջանակներում նախատեսվում է Հայաստանը ներկայացնել մշակութային հարստությունը խորհրդանշող տարրերով գերժամանակակից դիզայնով հագեցած տաղավարով, ինչը կապահովի նույն հարթակում՝ երկրի արժանի կերպով ներկայացումն աշխարհի 192 պետությունների հետ միասին:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

24.05.2021թ.